

16. ԹԱՆՋՅՈՒՄԱՆ ԽԱԹՈՒՆ

Կէլնի, չէլնե մեյ խատ իրիկ, մեյ խատ կընիկ, իսոնց մեյ խատ ախչիկմ կէլնի Թանջյուման անունով:

Ավուր մեկ էսա մարթ տաշտիս նեղացուկ կուգյա տուն: Էսա ախչիկն ի, կասի. - Ա՜խ, մընկա մեկ կընտոր կաթ էլներ, խայ պընրտինքյ ինի, ուտինքյ:

Խերն ի, որ ախչընկան էսա խաբար կլսի, կասի. - Ախչիկ, ես նեղացուկ եմ, զիկ քյանձ քյե տահա շատ կաթի իշտախ կա, աման ի՞նչ անեմ, որ աստված մե կովըմ չի տընվե, դե թող քյո մեր տատոնա կով, կընթի, տյու էլ կե, ես էլ ուտեմ:

Մարթն ի, խետ որ էսա պան կասի, ուր կընիկ բիրդան կտառնա մեյ խատ պետ կարմիր կովըմ:

Խեր էնան ախչիկնին որ էսա պան կտիսնան՝ կտընտեն մեչ ուրենց գյընլխուն, կուլան, կմընմընան, կտնթընթվեն կովու վիզ, ամալ էլ ճար չէլնի, մերն տառոցավ կով, պընծավ:

Խեր ախչիկն ին, որ կտիսնան թե էլ ճար չընկա, մեյ խատ չընվան կիսկին էսա կովու վիզ, կտանիս կկապին ուրենց տան մեկ պուճախ: Աման ընսկում կուզին, ընսկում կուզին որ ինչ որ ինոնքյ ուտին՝ կովուն էլ էն կկերցուցին:

Կովն էլ հա ուր ախչընկան ծեռքյեր կլիզեր, հա կարուրով-կարոտով կիրիշկեր ինոր իրես: Ընսկում էլ պեղ կաթ կուտեր, որ խեր էնան ախչիկ պեղ-պեղ ուտելուց սորա կծախին էլ:

Ավուր մեկ էսա մարթ կասի. - Աստված իմ կընիկ ծեռնիս առեց, մընացիր իմ իս էնան էսա ախչիկ, իս կթողնիմ կերթամ տաշտ, ախչիկ մենակ կմընա տուն: Է, ախչիկ այալ-ջահել, որ ճեչ չէլնի վեր ինոր գյընլխուն, ֆայդա չանե, ես պիտի պընսակվիմ:

Մարթն ի, կէլնի կպընսայվի: Մեյ խատ կընիկմ կառնի, էսա կընիկն էլ մեյ խատ ախչիկ ունի, էսա ախչիկն էլ կպիրի խետ ուր:

Էսա կընիկն ի, որ կուգյա էսա տուն, ինչխ դն խաչիչ կզզվա, էն էլ ըսկում Թանջյումանիչ կզըզվա: Զըմեն գյախ պամ մըհանա կպըռնի, էսա ախչըկան կտըրփի, կծայծըկի: Էսրով էլ ուր սիրտ չի խովնա, կէլնի մեկ գյընտրըլակ պյուրթ կուտա Թանջյումանին, կասի. - Առ էսա պյուրթ՝ խեստ կովուն կընա դաշտ, կովուն խորոտ արածապուցես, էսա պյուրթն էլ ըսկում պարակ մանիս՝ որ մազի պես: Զուր իրիկուն պիտի պըռծընիս պիրիս. որ չի պըռծար՝ էլ իմ ծեռնիչ չիս ազատվի:

Թանջյումանն ի, կառնի էտա գյընտրըլակ պյուրթ խեստ մեյ շատ առչըկնիմ, կով կուտա ուր առճև, լալելեն կէրթա դաշտ: Կովուն կթոդնի որ էն դարբար արածա, ինքն էլ առչըկան կպռնի ծեռ, կկայնի վեր քյարիմ, մեյ դեխեն կուլա, մեյ դեխեն առչըկան կմանի:

Ախչիկն ի, առչըկան մանելու գյախ, ոիրդան թել կկըտրի, առչըկան կինի մեչ քյարի ճեդքյեն:

Ախչիկն ի, կիճնի, որ ուր առչըկան փըտռի, կտիսնա որ մեչ քյարին տուռըմ կպայվի: Ախչիկն ի, էտա տըռնիչ կմըտնի ներս, կտիսնա, որ գյեռ քյառսում մատ քյարե թարանջա կիճնի տակ, ուր առչըկան էլ գյեռ էտա քյարե թարանջի վերվեն կըլոր-մըլոր կէրթա տակ:

Ախչիկն ի, կիճնի տակ կտիսնա որ ի՞նչ. գյեռ մեյ խատ աջեր պառավըմ նըստե էտա տեղ, ուր առչըկանն էլ պըռնե ուր ծեռ:

Ախչիկն ի, կասի. - Պառա՛վ, պառա՛վ, իմ առչըկան տու:

Պառավն ի, կասի. - Ախչիկ, քյե մեռնիմ, իմ գյըլոխ կեռա, արե մեյ խատ իմ գյըլոխ աչկի, նոր կընա:

Ախչիկն ի, կմոտանա պառվու գյըլոխ կաչկի: Որ մատքյերով ծամեր կուտա տեն, կտիսնա որ ի՞նչ. խանզարանըմուշ կարիճ, պապուկ, թըսթան-պեռլեռճ, պոչով ոճըլներ մեչ պառվու ծամերայ կեռկըճան:

Ախչիկն ի, կասի. - Ա՜խ, ինչ սիրսուի ի քյո գյըլոխ, կընըմանի իմ օղորմած մոր գյըլոխ:

Պառավն ի, որ էսա կլըսի, կասի. - Ախչի՛կ, բալամ, քյե մեռնիմ, խերիքյ ի իմ գյըլոխ աչկիս, կընա մառան, տաշտիչ մեկ-երկու խատ խայ պե ուտենքյ, անոթի ենքյ:

Ախչիկն ի, կմըտնի մառան, կէրթա մոտ տաշտ կտիսնա որ ի՞նչ. տաշտի մեչ սե-սև քյակոռ ի լըցուկ, համան դաստեմ քյակոռ կառնի կպիրի կուտա պառվուն, կասի. - Ա՜խ, ինչ սիվտակ փըռվուտ լոշ ի, անոթի էլնի մեկ կտոր ուտի:

Պառավն ի, որ էսա կլըսի, կասի. - Ախչի՛կ, բալամ, քյե մեռնիմ, խայ պիրեսիր, աման կընա մառան, քյասեմ առ, քիչ մ'էլ կերակուր պե ուտենքյ:

Ախչիկն ի, կմըտնի մառան, քյասեն կառնի. կէրթա. պուտկի պերան կպանա, կտիսնա որ ի՞նչ. բիթուն խատուկ գյոռտ. կըրիրա. օձ, նըմուշ-նըմուշ խարամ պաներ: Կըտելով քիչմ կլըսի մեչ քյասին, կառնի կպիրի կտընի պառվու առաճ, կասի. - Ա՜խ, ի՜նչ անուշ կերակուր ի, կնըմանի իմ օղորմուած մոր իւիած կերակուրներ. անոթի էլնի՝ մեյ պըրտյուճ ուտի:

Պառավն ի, որ ախչըկան էսա պանն կլըսի. առչըկան կտընի ուր ծընգյան տակ, կասի. - Ախչիկ, բալամ, քյե մեռնիմ. արե նըստի. ես իմ գյըլոխ տընիմ վեր քյո ծընգյան. մեյ կըտոր քընիմ. որ սև տեղեն գյետ կուգյա՝ զիկ ծեն մի տա, որ սիվտակ կարմիր գյետ կուգյա՝ զիկ ծեն տու:

Ախչիկն ի, չարնաչար կնըստի, պառավ ուր գյըլոխ կտընի վեր իսոր ծընգյան, կպառկի, կքյընի:

Աղեաթըմ կքյաշի թե չէ, ախչիկ կտիսնա, որ զըմփզըմփալեն սև գյետըմ կուգյա, կընցընի, գյետ մ'ասե, կնմանի սև կուպըր:

Կըտոր մ'էլ կմընա, կտիսնա որ սև գյետ ՝սըլըսավ, ինոր ետվիս դեղին գյետմ էկավ, գյետ մ'ասե, կնըմանի դեղին զըռտապըռ:

Ախչիկն ի, կըտոռմ էլ կաչկի, կտիսնա, որ սիվտա՜կ գյետըմ էկավ, աման ըսկում գուլալ ի, ըսկում սիվտակ ի, որ կնըմանի սիվտակ ծյուն:

Ախչիկն ի, որ էսա կտիսնա, համան շոտըմ պառվուն կխանի, կասի. - Էլի՛, էլի՛, սիվտակ գյետն էկավ:

Պառավն ի, կէլնի վեր, որ կտիսնա սիվտակ գյետն կուգյա, համան ախչըկան կպըռնի, խալվըներ կխանի. կմըտուսի մեչ էտա գյետին կլոդկըսուսի, կխանի տյուս:

Ախչիկն ի, որ էսա գյետիս կէլնի տյուս, ուր ջանդակ ըսկում կսիվտրընա, ըսկում կկսակընա, կէլնի պամբընի քյուլա:

Պառավն ի, կըտոռմ'էլ կաչկի, կտիսնա որ կարմիր գյետն էկավ, էլմ'էլ ախչըկան խալվըներ կխանի, կմըտուսի մեչ էսա կարմիր գյետին, կլոդկըսուսի, կխանի տյուս:

Ախչիկն ի, որ էսա տեղիս կէլնի տյուս, կտիսնա կարմիր-սիվտակ, ըսկու՜մ խորոտ, ըսկու՜մ խորոտ, որ տյու կասիր յոթն օր տալասի խնձոր էլնի: Ծամեյն էլ՝ ըսկում փելքյկտաան, ըսկում փելքյկտաան, որ տյու կասիս թե ոսկի ծամ ի:

Պառավն ի, ախչըկան կասի. - Ախչի՜ն, բալամ, քյե մեռնիմ, որ կէլնես տյուս, քյո կով պե, էսա քյարի տակ մեյ խատ կաթնախպյուր կա, պե ենտեղ ճըրի, նոր տար տուն:

Առչըկան էլ կուտա ախչըկան ծեռ, ինոր էրկու իրեսներ կպաքյի, կասի. - Դե կընա՝, աստված քյե պախի:

Ախչիկն ի, առչըկան կառնի, կտիսնա որ ի՞նչ. գյեռ պըրթեր

բիթունն էլ մանվե, էլի ըսկում պարակ թել, որ տյու կասես թե աղորթմանց մազ ի:

Ախչիկն ի, կէլնի տյուս, կով կպիրի պառվու ասած կաթնախպյուր, կճըրի, իրիկուն կառնի կէրթա տուն:

Խորթ մերն ի, որ կտիսնա թե ախչիկն էկավ, պյուրթ ըսկում խորոտ պարակ մաներ ի, որ ուր խելքյիս-մըտքյիս տյուս: Կիրիշկա ախչըկան խորոտկութեն, իսոր ծամերաց փելքյկըտան, պերան կմընա պաց, ինքյն ուր կասի. «Կա չըկա էսա պան տաշտ էրթալու մարիֆաթն ի, առատուն ըստրիս իմ ախչիկ կօրոխկեմ տաշտ՝ կով արածեալ, էն էլ թող խորոտկընա»:

Առատուն ի, Թանջյուման կէլնի, էլմ'էլ կէրթա որ կով տանի տաշտ: Մերն ի, կբոռա, կասի. - Ումուդախոր, արաբու պըռկոշ, զըմեն գյախ սովրար էրթալ տաշտ, քեֆ քյաշել, իմ խեղճ ախչիկ ըստեղ մեչ մուխ-ծըխին չյուրյումիշ էլնի՞: Էսօր էլ տյու կաց տուն, թող իմ ախչիկ կով տանի տաշտ, արածացուցի:

Խորթ մերն ի, կէլնի մեկ կանճ պյուրթ կուտա ուր ախչըկան, կով կիսկի առաճ, կասի. - Կընա՛ տաշտ, կով արածացու:

Ախչիկն ի, կառնի կով, առչըկան կպըռնի ծեռ, ծամոն կթալի պերան, կէրթա տաշտ: Ըզղեխ, էնդեխ ֆռալուց սորա կուգյա, կկայնի քյարիմ վերեն, կբաշլայի մեյ դեխեն ծամոն ծամել, մեյ դեխեն յավաշ-յավաշ առչըկան մանել: Քիրդան թել կկտրի, առչըկան կինի տակ՝ մեչ քյարիմ ճեղքյեն:

Ախչիկն ի, կիճնի տակ, որ ուր առչըկան փըտռի, կտիսնա որ մեչ քյարիմ տուտմ կա, էտա տըռնիս կիրիշկա որ ի՞նչ. քյառսուն մատ թարանջա կէճնի գյեսնի տակ, ուր առչըկան էլ գյեռ էտա թարանջի վերվեն կըլոր-մըլոր կէրթա տակ:

Ախչիկն ի, որ էսա պան կտիսնա, կինի ուր առչըկնի իտև, կէրթա տակ: Կտիսնա որ մեյ խատ պառավըմ գյեռ ուր առչըկան պըռնե ծեռ նըստե:

Ախչիկն ի, խեստ որ էսա պառվուն կտիսնա՝ կասի. - Ջատու, ջատու, իմ առչըկան տու:

Խառավն ի, կասի. - Խորոտ ախչիկ, քյե մեռնիմ, արե մեյ խատ իմ գյըլոխ իշկա, քյորն ընգյե մեչ:

Ախչիկն ի, կասի. - Ջայնամ, պառա՛վ, ես քյո գյըլոխ իշկացո՞ղն եմ, իմ առչըկան տուր էրթամ, վըռազն իմ:

Պառավն ի, կասի. - Ախչիկ, քյե մեռնիմ, պան չըկա, քյե վարցքյ ի, մեյ կըտոր իրիշկա, էլմ'էլ թող կընա:

Ախչիկն ի, որ կտիսնա թե պառավ շատ ադաչանքյ կէնի, կմոտանա որ ուր գյըլոխն իրիշկա: Խեստ որ ծեռ կուտա իսոր մազեր, կտիսնա որ ի՞նչ. կարիճ, պապուկ, թըսթան-պեղեռճ, էլ ինչ նըմուշ

խարամ-խարամ պաներ ասես, գլեռ մեչ պառվու ծամերայ կեռկլծան:

Ախչիկն ի, համան կթղքյի վեր պառվու գլղլխուն, կասի. - Այի՜, պառավ, էսա ի՞նչ խարամ գլղլոխ ունիս, վի՞ր սիրտ կէրթա ծեռ տա քյոռ գլղլխուն:

Պառավն ի, կասի. - Ախչիկ, բալա՛մ, չէ, չէ, բաբե կընա՜ մառնիյ մեյ կտոր խայ պե ուտենքյ:

Ախչիկն ի, խետ որ խայի ծեն կլընի, յոթ տարվան ւանոթու կա՜յդա կվագի մառան, կտրփվի վեր տաշտին, կիրիշկա որ ի՞նչ. կեռլեռմ քյակոռ գլեռ մեչ տաշտին լրյուկ ի, նա խայ, նա պան:

Ախչիկն ի, որ էսա պա՜ն կտիսնա, բոռալեն կուգյա տյուս, կասի. - Ջատու, տյու ծրոռե՞ր իս, քյակոռներ լրյեր իս մեչ տաշտին, զիկ կասես՝ կընա՜ խա՞յ պի ուտենքյ:

Պառավն ի, կասի. - Ախչի, քյե մեռնիմ, խայ չէ, չէ, բարե էտա քյասեն առ տար, մեյ կրտոր խոշաբ լիս, պե ուտենքյ:

Ախչիկն ի, կառնի քյասեն, կէրթա մառան, պուտկի պերան կպանա, որ խոշաբ լրյի՝ կտիսնա որ ի՞նչ. մեչ պուտկին մուկ, սալատրանա, մակադուզ, մոդոգիկ, տո ես ի՞նչ կիտեմ, խազարանրմուշ խարամ-խարամ պաներ: Համան խուտ կտրփի վեր պուտկի պերնին, բոռալեն կուգյա տյուս, կասի. - Ումուդախոռ ջատու, ինչ կանդար խարամ պան որ կա, լրյեր ես պուտկրներ, զիկ կխապես, կասիս՝ կրնու խոշա՞բ լիս պե ուտենքյ, քյոռ կոտն ուտի քյոռ խոշաբ, շիտ արա իմ առչրկան տու տանիմ:

Ախչիկն ի, ըսրսկրնա՜ վեր պառվուն բոռբրռալու գյախ, բիրդա՜ն զրմփզրմփալեն սև գլեռ կուգյա:

Պառավն ի, համան կխասնի ախչրկուն խալվրներ կխանի, կմրտուցի մեչ էտա սե գլեռին, կլոդկրյուցի:

Ախչիկն ի, որ էսա գլեռիյ կէլնի տյուս, կսնա կէլնի թամամ արաբու պրոկոշ:

Սև գլեռ էրթալուց սորա զրմփզրմփալեն դեղին գեռն էն ղեխեն կուգյա:

Պառավն ի, ախչրկան գլրնա՜ կպրոնի կմրտուցի մեչ էտա գլեռին, կլոդկրյուցի:

Ախչիկն ի, որ էսա դեղին գլեռ կլոդկրնա կէլնի կյուս, կդառնա սև-դեղին, ըսկուն որ մսրթ իրիշկեր իսոռ իրես՝ սիրտ կխառներ:

Պառավն ի, առչրկան կուտա ախչրկան ծեռ, կասի. - Դե՛ կընա՜ խեռ քյոռ պանին:

Ախչիկն ի, կէլնի տյուս, իրիկուն կով կառնի, կէրթա՜ տուն:

Մերն ի, կով կկրթի, կտիսնա, որ կով ցամքյե, մեկ պուտ բիլու կաթ չի տա: Կուգյա մոտ ուր ախչիկ, կտիսնա որ ի՞նչ. ախչիկն էլե

սև-դեղին, արաբու պըռկոշ, ըսկում՝ որ իփոր մարթ իրիշկա իրես՝ սիրտ կխառնի, պյուրթն էլ քյանիմ թել ջեորով մաներ ի, էն էլ ըսկում խասար, որ կասես թե չըվան ի:

Մերն ի, որ էսա պան կտիսնա, մեչ ուր մըտայ կասի. «Կա չըկա էսա կովու արածն ի, կայնի դե ես սև կով կպիրիմ վեր քյո գյըլխուն»:

Իրիկուն ի, որ մարթ կուգյա տուն, կընիկ կասի. - Մարթ, մեր կով բիթուն-բիթուն ցամքյեր ի, ես էլ խիվանտ եմ, իմ իշտախ ըսկում միս կուզի, ըսկում միս կուզի որ, թե միս չուտիմ՝ կմեռնեմ:

Մարթն ի, կասի. - Կընի՛կ, էտա ի՞նչ կասիս, մենքյ ենք՝ էսա մեկ կով, մեր ումուտ-ապավեն գյեռ էտա կովն ի, էն էլ որ մորթենքյ ուտենքյ, ի՞նչ կէլնի մեր հալ:

Կընիկն ի, կասի. - Չէ՞, չիմ կիտե, պիտի մորթես որ մորթես: Որ չմորթես, ես քյո տընիցյ կէրթամ, նա տյու զիկ իրիկ, նա ես քյի կընիկ:

Մարթն ի, շատ կմըտածի, կտիսնա որ ուր կընիկ անըսպիռ ի, չի կանա վերեն, ճար կկըտրի, կասի. - Կընի՛կ, տյու քյո աստված, տյու կիտես՝ կուզես մորթի, կուզես՝ թող:

Կընիկն ի, կասի. - Որ տյու կթողնես զիկ, ես առատուն կասաբ կկանչիմ կուտամ մորթել, մըկա իմ ջա՞ն, թե քյո կո՞վ:

Թանջյուման ի, որ էսա կլըսի, կիշեր յավաշմ յաթղի մեչեն կէլնի տյուս, կէրթա կփաթըթվի ուր կով-մոր վիզ, կուլա, կմըռմըռա:

Թիրդան էսա կովուն լեզյու կէլնի, կասի. - Ախչիկ, բալա՛մ, մի լա, զիկ առատուն կմորթեն, իմ միս որ ինոնքյ ուտեն, ինոնց թըթյու յի, տյու կե՝ քյե խամար քաղցր ի, ամաև քյե պամ կթամխիմ, մըտեր չի խանիս, որ զիկ կմորթեն, տյու իմ կաշին կառնիս, իմ ուսկըռներ մեկիկ-մեկիկ կժողվես, կլըցես մեչ էտա կաշուն, կպիրես իմ մըսրիկ տակ կխորիս, օրըմ քյե լազըմ կուգյա:

Ախչիկն ի, չուր լոս ըտըսկընա կփաթըթվի ուր կով-մոր վիզ, կուլա, կմըռմըռա, մոր ճակատ կպաքյի, աչքյեր կպաքյի:

Առատուն խեր որ պարի լոս կպացվի, մերն ի, կէլնի վեր ալաբ-զալաբ կէրթա կասաբ կպիրի, կով փայխիս կքյաշին տյուս, կմորթին:

Ախչիկն ի, կով մորթելու գյախ կընացի փըռքյըվի վեր մըսրին, կուլա, կմըռմըռա:

Էսա կով որ կմորթեն կպըռծնեն, ախչիկն ի, կառնի կաշին, ուր մոր ոսկըռներն էլ բիթուն գյաղտիկ կժողվի, կլըցի մեչ էտա կաշուն, կփաթըթի, կտանի փագյախ կովու մըսրի տակ կփորի, կխորի:

Ավուր մեկ մեչ էտա գյեղին խարսնիս կէլնի: Էսա մերն ի, ուր ախչըկան խալվըներ կխագյուցի, կզարտըրի, մեկ մաղ կորեկ կցըվըռտի տախտի օրթեն, մեյ խատ էլ թաշտ կտընի տախտի

օրթեն, Թանջյումանին կասի. - Ումուդախոր էրկնալեզյու, չուր իմ տառնալ՝ էսա կորկըներ մեյ-մեկ պիտի ժողվիս, լըսիս թաջիր: Էսա թաշտն էլ առսընքյովտ պիտի լըսես, որ իրիկուն էկա տիսա իմ թամխածն չես արե՝ վայն իկե քյո վերեն:

Մերն ի, որ էսա խաբար կասի, կառնի ուր ախչիկ, կէրթա խարսնիս:

Թանջյուման ի, կէլնի կբաշլայի կորեկ ժողվել: Մեյ դեխեն էլ աչկեր պըռնի վեր թաշտին, ընքյուռ-ընքյուռ կուլա, կմըղկըտա: Ամաե նա թաշտի տակ առսունքյ կէրևա, նա էլ գյետնի կորկի վերեն բալու կանի ուր ժողվել:

Բիրդան դուռ կպացվի, մեյ խատ պառավմ կմըտնի ներս: Ախչիկ կիրիշկա, կտիսնա որ էսա էն քյարի մեչի պառավն ի, որ ուր թաթխեց մեչ սիվտակ էնան կարմիր գյետերաց:

Պառավն ի, որ կմըտնի ներս, կտիսնա ախչիկ կուլա, կխառսուցի կասի. - Ախչիկ, ընչի՞ կուլաս:

Ախչիկն ի, կասի. - Ի՞նչ անիմ չիլամ, իմ մեր էսա կորկընիր լըսե մեչ տախտին, զիկ կասի թե՝ մեյ-մեկ պիտի ժողվիս, լըսիս թաջիր, էսա թաշտն էլ տըրեր ի ըստեղ, զիկ թամխեր ի որ լամ, իմ առսընքյով էսա թաշտ լըսեմ:

Պառավն ի, որ էսա պան կլըսի, կասի. - Ախչիկ, մի լա, էլի մեյ խատ ավել պե՝ տու զիկ:

Ախչիկն ի, կէլնի մեյ խատ ավել կպերի, կուտա էսա պառվու ծեռ:

Պառավն ի, կառնի ավել, շուշոտ-շուշոտ էտա կորիկներ կավելի, կլըսի թաջիր, մենակ մեկ ճանգյ կսըրսընի թաջրի առճև: Կդառնա քիչմ աղ կառնի, կթալի մեչ թաշտին, կդառնա իլին ճյուր կլըսի, կխառնի չհուր աղեր բիթուն կխալին, կէլնի առսընքյսխամ: Կդառնա ախչըկան կասի. - Շոտ կընա քյո խալվըներ խազյի արե, քյե տանիմ խարսնիս:

Ախչիկն ի, կասի. - Զիկ խալավ չընկա:

Պառավն ի, կասի. - Կընա փագյախ, մըսրի տակ փորի, քյո խալվըներ էնտեղն ի, խան առ արե:

Ախչիկն ի, կմեզի, կասի. «Մըսրի տակ ես իմ մոր կաշին էնան ոսկընոներն իմ խորե, էնտեղ խալավ ո՞ր տեղեն»: Ամաե ծեն չի խանե, կէրթա փագյախ, մըսրի տակ կփորի, կտիսնա որ ի՞նչ. գյեռ մեկ բեռխչա խալավ: Համաե կառնի կուգյա:

Պառավն ի, շոտմ ախչըկան խալվըներ կխագյուցի, կառնի կէրթա խարսնիս:

Էսա ախչըկան խորթ մերն ի, կիրիշկա որ ի՞նչ. էսա ուր խորթ ախչիկն ի, ամաե իսոր խալավ-խագյուստ ո՞ր տեղեն: Կմեզի, կմեզի, չի կանա խանե:

Իրիկվան դեխ պառավն ի, ախչընկան կասի. - Տե շոտ արա, էրթանքյ տուն, քյանի որ քյո մեր չի կընայե տուն:

Կպընի ախչընկան ծեռ, կդառնան տուն:

Տուն տառնալու գյախ Թանջյուման ի, ոտպայ ոսկի սոլ կփընոթընի կինի մեչ ախպընրին: Էսա ախչիկ էնան պառավ էն կանդար չափալամիշ կէլնեն, չեն կանա խանե:

Պառավն ի, կասի. - Ախչիկ, անգյընկանքյ, էլի էրթանքյ տուն, քյանի քյո մեր չեկե. ես առատուն շոտ կուգյամ կխանեմ:

Ախչիկն ի, կէլնի պառվու ծեռ կպընի, կուգյան տուն, շոտընմ ուր խալվըներ կխանի, կտանի կխորի մընսրի տակ, կուգյա էլմ'էլ ուր ճաթ խալվըներ կխայնի, կբաշլայի լալ, էտա կորկըներ ժողվել:

Իրիկուն մութ գյախ մերն ի, խետ ուր արաբու պընոկոշ ախչընկան խարսնընսիկ կդառնա. կուգյա ախչընկան կասի. - Ումուդախոր լեյթի, հալա չի՞ս պընոծե:

Ախչիկն ի, լալելով կասի. - Մարե՛, ի՞նչ անեմ, մընայեր ի էսա կընտոր, էն էլ կպընոծընեմ, նոր կքյընեմ:

Թակավորու լաճն ի, առատուն շոտ ուր ծիյանքյ կպիրի ախպյուր կճընի: Կտիսնա որ ուր ծիյանքյ կխընոտընին, ճյուր չին խընմի: Կկընզվի կիրիշկա որ մեչ ախպընրին պամ կփելքյկընտա: Ուր ծեռայ փետ կմընտուլի, կխանի տյուս, կիրիշկա որ ի՞նչ. մեյ խատ ոսկի սոլընմ, աման չուտիս չընխմիս, էտա սոլի խորոտկութեն թամաշա անիս:

Թակավորու լաճն ի, որ էսա սոլ կխանի տյուս, կասի. - Վալա՛, ես էսրա տեր պիտի առնիմ:

Առատուն թակավորու լաճ դալալ կուտա կանչել, կասի. - Ինչ կանդար ախչիկ որ կա՝ թող գյան թակավորու քեռշկ-սարեն, էնտեղ մեյ խատ սոլմ կա, վիր ոտնով էլավ՝ թակավորու լաճ էն ախչընկան պիտի առնի:

Պառավն ի, խետ որ էսա պան կլընսի, կիմնա որ Թանջյուման սոլն ի: Շոտմ կէլնի կուգյա իսոնց տուն, ախչընկա խոր կասի. - Տնաշե՛ն, մարթ չասե, որ մեյմեկելու պարեկամ ենքյ, աղորթ որ կընտորմ խընայեր ենքյ, աման ինչկանդար որ չէլնի՝ գյընա պարեկամ ենքյ, ես կուզիմ, որ գյընա մեչ մե էրթալ-գյալ էլնի:

Էսա մարթն ի, կասի. - Ընչի՞ չէ, տյու երբ էկար մեր տուն, մենքյ քյե մընեցինքյ տյուս:

Պառավն ի, կասի. - Որ ընսկուն ի, ընտրրիս քյո Թանջյուման ախչիկ տուր, ես քյանիմ օր տանիմ մոտ զիկ խուր:

Մերն ի, համան էն դեխեն կվերուցի կասի. - Որ տյու աղորթմանց կուզիս պարեկամութեն անենքյ, ընչի՞ իմ ախչընկան չիս տանի, այրի-սեզի կանիս, էն խո՞րթ ի, ինոր խամար:

Պառավն ի, կասի. - Ավար չէ, քյեռոնամ ես էն էրկուս մեյմեկելուց չեմ ճեռկե: Աման Թանջյուման որ կա՝ ճիչն ի, քյոն որ կա՝ պստեկն ի: Առաճ ճիչ տանիմ, սորա կուգյամ պզտիկն էլ կտանիմ:

Վարհասըլի կառնի Թանջյումանին, կտանի ուր տուն:

Էսա թակավորու լաճն ի, որ դալալ կուտա կանչել կպըռծընի, մեչ էտա երկրին ինչկանդար որ ախչիկ կեր՝ բիթիուն կէրթան թակավորու քյեռշկ-սարեն, ուրենց ուտքյեր վեր էտա սոլերաց կջըռբեն:

Վով որ կընացեր ի՝ ուր ուտքյեր ջըռբիր ի, բիթուն էլ փեռ-փեռշման կդառնան ետ: Ընչի՞ որ, մեկու ուտնով ճիչ ի, մեկուն նեղ ի, մեկուն ըսկի չի մըտնի, վարհասըլի իսկի մեկու ուտնացն էլ չի հարմարի:

Պառավն ի, գյաղտիկ Թանջյումանին կօրիխկի ուրենց տուն, որ ուր խալվըներ առնի գյա:

Թանջյումանն ի, կէրթա յավաշ մը կմըտնի ուրենց փագյախ, մըսրի տընկանց կխանի ուր խալվըներ, կգարկի ուր հունթ, կուգյա պառվու մոտ:

Պառավն ի, Թանջյումանի ծամեր կսանդրի, ոսկի խալվըներ կխագյուցի, ոսկի սոլի մեկ թակն էլ կխագյուցի, էն մեկել ուտն էլ առծաթ սոլ կխագյուցի, կառնի կէրթա թակավորու քյեռշկ-սարեն:

Թակավորու լաճն ի, խեստ որ էսա ախչընկան խորոտկութեն կտիսնա՝ խելքյ գյըլխուց կէրթա:

Թանջյումանն ի, խեստ որ էտա սոլ կխայնի, ըսկում կոյմընշի՝ տյու կասիս թե գյեռ վեր իսոր ուտաց յոլչի են առե, էսա սոլ շինե:

Թակավորու լաճն ի, որ կտիսնա թե սոլ էսա ախչընկան ուտնովն ի, էն սոլի թակն էլ զաթի ախչընկան ուտն ի, ուրախութեն կծընի: Կդառնա պառվուն կասի. - Պառա՛վ, ես քյոն ախչիկ կառնեմ:

Պառավն ի, կասի. - Շատ աղեկ, արե իմ տուն, իմ ախչիկն ուզի. պանիս էկավ՝ կուտամ, պանիս չէկավ՝ չիմ իտա: Ես ախչիկ ընշանելու խամար չէկա ըստեղ: Ես էկա ըստեղ, որ տյու ավատիր, թե էտա սոլի թակ իմ ախչընկան սոլի թակն ի, տաս՝ ես առնիմ, էրթամ:

Թակավորու լաճն ի, պառվու տուն խասկընալուց սորա սոլի թակ կուտա պառվուն, պառավն էլ կթողնի կէրթա:

Թակավորու լաճն ի, էն մեկել օր ուր թադարյուքյ կտիսնա, խեստ ուր նազիր-վազիրին կուգյա էսա պառվու տուն:

Պառավն ի, ըստըրիս առծընթե խալվըներ կխագյուցի Թանջյումանին, առծընթե սոլեր կխագյուցի, կպիրի թակավորու լաճու ունաճ:

Թակավորու լաճն ի, որ էսա առծրթե խալվընեբաց մեչ կտիսնա էսա ախչընկան, կշըշընկոի, կասի. - Պառավ, իմ տեսած ախչընկան խալվընեբ ըսըսկընա չէր, ուրիշ նըմուշ էր:

Պառավն ի, որ էսա պան կլըսի, մընիանեն կանի պարկանալ, կասի. - Է՜յ, թակավորու լաճ, աղորթ որ տյու թակավորու լաճ իս, ամաև իմ ախչիկն էլ պակաս ախչիկ չի, որ ես մեկ ծեռք խալվով պախիմ: Մանգյար իմ տուն ըսըսկընա պըզտիկ կտիսնաս, կասիս քյամբաՆ ի, ուրիշ նըմուշ խալավ չընկա:

Պառավն ի, էսա ասելուն պես, կմընտնի մառնիչ ոսկի խալվընեբաց բեռխչեն կպիրի, կտրըտի թակավորու լաճու առճև, կասի. - Տիս հա, էսա քյո տիսած խալվընեբ չի՞:

Թակավորու լաճն ի, կասի. - Խա՛, էսա յի:

Պառավն ի, կասի. - Էսա խալվընեբ մեյ դիր իմ ախչիկ խագյավ էլաև տյուս, էլ ըստրրիս էն չի խայնե, էն բոշ էլաև, որ տյուս էլնի ըստրրիս էլ ուրիշ նըմուշ խալավ պիտի խայնի:

Թակավորու լաճն ի, որ էսա խաբրբներ կլըսի, ուր պերան կմընա պանց: Կխանի թակավորավայել հանդիեքյ կուտա էսա ախչընկան նըշան, պառվուն կասի. - Պառա՛վ, հազրրվի, վաղ կուգյանքյ, ախչիկ կտանենքյ:

Պառավն ի, կասի. - Ես հազրր իմ, ամաև վաղ որ կուգյաքյ ախչիկ ուր խերանց տընիչ պիտի տանեքյ, ես որ կամ՝ իսոր խորքյուրն իմ, իսոր մեր մեռեր ի, ես իսոր մերութեն կանիմ: Ամաև տանել պիտի ուր խոր տընիչ տանեքյ:

Թակավորու լաճն ի, կասի. - Շատ աղեկ:

Պառավն ի, թակավորու լաճուն ախչընկան խերանց տուն շանց կուտա, իսոնքյ կէլնեն կթողնեն կէրթան:

Խետ որ թակավորու լաճ կթողնի կէրթա, բիթիուն գյեղի մեչ խաբար կինի թե՝ թակավորու լաճ Եղոյի ախչիկ կառնի:

Պառավն ի, համաև կէլնի ախչընկան ծեռ կպընոնի, կառնի կտանի ուր խոր տուն, կասի. - Ասպած ծեր տուն ավիր չանի, ծեր ախչընկան բախտ պայվեր ի, ծերն էլ խետ: Թակավորու լաճ բիրդան մընտավ իմ տուն, էսա ախչընկան տիսավ, խավնավ, ոտն իրիր մեչ մեկ սոլի, ասայ. «Իլա՜հ-բիլա՜հ, ես էսա ախչընկան կառնեմ»: Ես էլ բիլա՜ չկառայա խա-չէ ասի, ուրենց ասեցի. «Ախչիկ ես կտանեմ ուր խերանց տուն, տյուքյ կիտեքյ, կընա՜ցեքյ խոր-մոր մոտեն ուզեքյ տարեքյ»: Թակավորու լաճն էլ համաև վիրուց զիկ ասայ. «Պառավ, կէրթա՜ս էսա ախչընկան խոր-մոր իմ թա՜բա՜ֆեն պա՜րև կանիս, կասիս. թակավորու լաճ կասեր՝ թող հա՜զր մընաև, ես վաղ իմ նա՜զիր-վա՜զրներով կուգյամ, ախչիկ կառնեմ կտանիմ»: Մընկա տյուքյ կիտեքյ, կուզեքյ տընվեքյ, կուզեքյ մեքյ իտա:

Պառավն ի, էսա խաբբրներ ասելուց սորա, ուր թիվի տըկի բեռխչեն էլ կտընի մոր առաճ, կասի. - Էսա խալվընեռն էլ թակավորու լաճն իտուր որ վաղ խսագյուցեքյ ախչըկան, հաՀզըրեքյ որ ինքյ գյա շատ այլամիշ չէլնի, շոտմ առնի էրթա:

Պառավն ի, էսա պաներ ասելուց սորա կթողնի կէրթա:

Խորթ մերն ի, որ էսա բեռխչեն կպանա, աչքյ կինի էսա ոսկի-առծաթ խալվըներ՝ պերան կմընա պաց, համան մեչ ուր մընտաց կասի. «Աղեկ, ես կիտեմ ինչ կանեմ»:

Էն մեկել օր առատուն մերն ի, կէլնի վեր, թոնիր կվառի, ճյուր կտաքյյուցի, ուր արաբու պընոկոշ ախչիկ կլոդկընցուցի, կպիրի էտա ոսկի խալվըներ կխագյուցի, աման ընսկի վեր ախչընկան չի գյա. մեկ կընտոր նեղ ի, մեկն լեն ի, աման մեր ընսկի էն դեխեր չէլնե: Խալվըներ խագյուցելուց սորա կնստընցուցի վեր խարսի թախտին, քյեռդքյն էլ կթալի վեր գյընլխուն: Թանջյումանին էլ կպիրի խին, խազար տարվան ճաթ-լաթ խալավմ կխագյուցի, մոխիր կմաղի վեր գյընլխուն, կմընտուցի թոներ, սալ կքյաշի վեր թորվան պերնին:

Առատուն շոտ թակավորու լաճ խեստ ուր նազիր-վազիրին նաղարով-զուռնով կուգյան էսա մարթու տուն, որ ախչիկն առնեն էրթան: Կմընտնեն ներս, կտիսնան որ գյեռ խարսի թախտ կապուկ, խաբսն էլ հազընը նըստե վեր թախտին:

Էսա թակավորու վազիրն ի, կմընտնի տուն թե չէ՝ կտիսնա որ մեյ խատ կարմիր այընլորմ գյեռ կայնե վեր թաջընրի գյընլխուն, կբոռա.

Կուկուլիկուկու, սանախեր,
Թանջյուման խաթուն մեչ թորվան,
Արաբու պընոկոշ վեր թախտին:

Թակավորու վազիրն ի, մեկ-էրկու դիր էսա այընլորի խոսկեր ականջ կանի, կէրթա թակավորու լաճուն կասի. - Թակավո՛ր ապրած կենաս, արի էրթանքյ ենա տեղ մեյ խատ այընլորմ կա՝ տես ի՞նչ կասի:

Թակավորու լաճն ի, կէլնի կուգյա մոտ այընլոր:

Այընլոր խեստ որ թակավորու լաճուն կտիսնա, կբոռա.

Կուկուլիկուկու, սանախեր,
Թանջյուման խաթուն մեչ թորվան,
Արաբա պընոկոշ վեր թախտին:

Թակավորու լաճն ի, որ այընլորի էսա խաբբրներ կընլսի, շատ կզարմանա, ուր վազիրին կասի. - Մեյ շատ առաճացի էտա թորվան պերնի սալ վերցրու, խենքյ վո՞վ կա մեչ թորվան:

Վազիրն ի, կէրթա թորվան սալ կվիրուցի, կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ խուռնի-խընրեղեն ախչիկմ ճաթ-լաթ խալվընեռով մեչ մոխրին շաղընուկ, գյեռ նըստե մեչ թորվան, կուլա: Համան թակավորու

լաճուն կկանչի, շանց կուտա, կասի. - Թակավո՛ր ապրած կենաս, կա չըկա էսա այըլոր դռորի կասի. մեյ խատ էրթանքյ խարսի քյեռոքյ վերուցենքյ, խենքյ են վո՞վ ի ենտեղ:

Թակավորու լաճն ի, խետ ուր վազիրին կէրթա մոտ խարս, քյեռոքյ կվերուցեն, կտիսնան որ ի՞նչ. գյեռ մեյ խատ արաբու պըռկոշ ախչիկմ աման որ մարթ իրիշկա երես, էլ յոթ տարի խաց չի կանա ուտե, ըսկում որ գյեշ ի:

Թակավորու լաճն ի, որ էսա պան կտիսնա, շատ կպարկանա, ամր կանի ախչըկան խոր կկանչի, կպիրի ուր առճն, կխառցուցի, կասի. - Էսա ի՞նչ պան ի, էսա վո՞վ ի արե:

Մարթն ի, որ թակավորու լաճու խաբըրներ կլըսի, կշիվարի, լեզուն մեչ պերնին կչորնա, կմընա:

Էսա կըտոր գյախ բիրդան պառավ կուգյա, կկայնի թակավորու լաճու առճն, կասի. - Թակավո՛ր ապրած կենաս, էսա պան իսոր խորթ մերն ի արե, մարթ չարե: Էսա արաբու պըռկոշն էլ որ կա՝ ուր ախչիկն ի, որ կուզեր խապելութնով կապեր քյո գյըլխուն:

Թակավորու լաճն ի, որ պառվուց էսա խաբըրներ կլըսի, ամր կանի ուր ջալադներաց, որ էտա խորթ մորն ենան էտա արաբու պըռկոշին խանեն տյուս, կապեն քյաեել ծիյերաց պոչեր, քըշեն սարքյար, իրիկուն ինոնց ճանջըխուկ գյըլխու կոտեր խետ մազերաց պիրեն, ուրեն շանց տան:

Ջալադներն ին, համան արաբու պըռկոշի վիրվից կխանին էտա ոսկի խալվըներ, խետ ուր մոր կկապեն քյաեել ծիյերաց պոչեր, կքըշեն սարեր:

Թակավորու լաճն ի, նոր ամր կանի Թանջյուման խաթուն թորվընից կխանին տյուս, կտանին համամ, կլողկըցուցեն կպիրեն ուր ոսկի խալվըներ կխագյուցեն, նոր թակավորու լաճ կառնի կտանի ուր քյեռշկ-սարեն: Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանի, կպըսակվի: Ինոնքյ կխասնին ուրենց մուրազին, տյուքյ էլ խասնեք ծեր մուրազին: